ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

20.11.2020թ
Ե/373-2020

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ թիվ 01/107.3/00404-2020 գրությանը ներկայացնում ենք ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու 2020թ նոյեմբերի 23-ին կայանալիք նիստի վերաբերյալ տեղեկացումը, ավագանու կայանալիք նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը՝ ըստ կից հավելվածների:

Առդիր՝ 5 էջ:

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ
Սարահարթ համայնքի ավագանու նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Սարահարթ	Ավագանու նիստ	23.11.2020թ	14:00	Սարահարթի համայնքապետարանի նիստերի դահլիճ (Սարահարթ համայնք 10փ 1նրբ. 12)

ՕՐԱԿԱՐԳ

1. Սարահարթ համայնքի ավագանու 2020թ նոյեմբերի 11-ի թիվ 38 որոշումը անվավեր ճանաչելու մասին
2. Համայնքային սեփականության գույքն օտարելու համաձայնություն տալու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2020թ նոյեմբերի 23-ի նիստի օրակարգը:

1. Սարահարթ համայնքի ավագանու 2020թ նոյեմբերի 11-ի թիվ 38 որոշումը անվավեր ճանաչելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

2. Համայնքային սեփականության գույքն օտարելու համաձայնություն տալու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 38 ՈՐՈՇՈՒՄԸ
ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով՝ Սարահարթ համայնքի ավագանին

Որոշում է.

Չեղարկել Սարահարթ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 38 որոշումը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 35-րդ հոդվածի 18-րդ կետերով սահմանված դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և գույքի գնահատող ԱՁ Արտյոմ Սաքանյանի N 01 հաշվետվությունը՝

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սարահարթ համայնքի սեփականություն հանդիսացող 2003թ. արտադրության VOLKSWAGEN TOUAREG 3.2 մակնիշի մարդատար ավտոմեքենան աճուրդով օտարելու Սարահարթ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Գույքի մեկնարկային գին սահմանել գույքի գնահատող ԱՁ Արտյոմ Սաքանյանի կողմից գնահատված 1800300 ՀՀ դրամ գինը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից: